



Կարգապահական գործ թիվ ԿԳ-16131

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2017 թվականի հունվարի 16-ի թիվ 13-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ ԿԳ/10-Ա

**ՓԱՍՏԱՐՔԱՆ ՎԱՋԳԵՆ ՍԱՄՎԵԼՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ
ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՅԸ ՔՆՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(ԱՆԴԱՄԱՎՃԱՐԻ ԳՈՐԾՈՎ)**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ նաև՝ Պալատ**) խորհուրդը (**այսուհետ նաև՝ խորհուրդ**), նիստը նախագահող՝ Կարեն Մեծլումյանի, խորհրդի անդամներ՝ Կարապետ Աղաջանյանի, Մելանյա Առուստամյանի, Սիմոն Բաբայանի, Նելլի Հարությունյանի, Երվանդ Վարոսյանի, Կարեն Սարգսյանի, Քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի, Քննության առնելով փաստաբան Վազգեն Սամվելյանին (արտոնագիր թիվ 958) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.

Պալատի գլխավոր հաշվապահի կողմից 18.07.2016թ-ին Պալատի նախագահի առաջին տեղակալին ներկայացվել է տեղեկանք, այն մասին, որ փաստաբան Վազգեն Սամվելյանը (արտոնագիր թիվ 958) 2015թ. հունվարից (1000 դրամ) մինչև 2016թ. հունիս (ներառյալ) ամիսների համար անդամավճարի գծով ունի 86.000 (ութսունվեց հազար) ՀՀ դրամ գումարի չկատարված պարտավորություն:

2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.

Պալատի նախագահի առաջին տեղակալի 26.07.2016թ. թիվ 286-Ա/ԿԳ-16131 որոշմամբ փաստաբան Վազգեն Սամվելյանի (արտոնագիր թիվ 958) նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասի, 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և Կանոնագրքի 2.9.1 ենթակետի խախտման հատկանիշներով (կարգապահական գործ՝ ԿԳ-16131):

Կարգապահական գործի արագացված կարգի համաձայն՝ սույն կարգապահական գործը հանձնվել է Պալատի խորհրդին:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 2017 թվականի հունվարի 26-ին ժամը 18:58-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 2, 4-րդ հարկ 12 սենյակ):

3. Պատասխանողի համառոտ բացատրությունը.

Պալատում առկա փաստաբանների ցուցակում և փաստաբանի անձնական գործում փաստաբան Վազգեն Սամվելյանի էլեկտրոնային փոստի հասցե առկա չէ: Փաստաբան Վազգեն Սամվելյանին փոստային ծառայության միջոցով ուղարկվել է նիստի մասին ծանուցագիր, սակայն փոստային ծրարը ետ է վերադարձվել «Տեղափոխված» նշումով: Պալատի աշխատակազմը փաստաբան Վազգեն Սամվելյանին խորհրդի նիստի և ժամանակի մասին ծանուցել է հրապարակային կարգով՝ նիստի ծանուցումը Հայաստանի Հանրապետություն օրաթերթի 13.01.2017թ. թիվ 2 (6523) համարում հրապարակելու միջոցով:

4. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.

Պալատի խորհուրդն, ուսումնասիրելով գործում առկա գրավոր փաստաթղթերը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

- 1) Փաստաբան Վազգեն Սամվելյանը փաստաբանական գործունեության արտոնագիր է ստացել 24.10.2009թ. (հաստատվում է Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 03.10.2016թ. տրամադրված տեղեկանքով),
- 2) փաստաբան Վազգեն Սամվելյանը ունի 86.000 (ութսունվեց հազար) ՀՀ դրամ գումարի չափով անդամավճարի մուծման չկատարված 2015թ. հունվարից (1000 դրամ) մինչև 2016թ. հունիս (ներառյալ) ամիսների համար (հաստատվում է Պալատի գլխավոր հաշվապահի կողմից 18.07.2016թ. Պալատի նախագահի առաջին տեղակալին տրամադրված տեղեկանքով),
- 3) փաստաբան Վազգեն Սամվելյանը 2015թ. հունվարից (1000 դրամ) մինչև 2016թ. հունիս (ներառյալ) ամիսների համար անդամավճարի գծով 86.000 (ութսունվեց հազար) ՀՀ դրամ գումարի պարտքը չի վճարել (հաստատվում է Պալատի գլխավոր հաշվապահի կողմից 16.01.2017թ. տրամադրված տեղեկանքով):

5. Պատասխանողի անձր բնութագրող հանգամանքները.

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն՝ փաստաբան Վազգեն Սամվելյանի (արտոնագիր թիվ 958, ստացած՝ 24.10.2009թ.) նկատմամբ 2009-2016թթ. ընկած ժամանակահատվածում կարգապահական վարույթ չի հարուցվել:

6. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.

Հիմք ընդունելով Պալատի խորհրդի կողմից հաստատված փաստերը, դրանք հիմնավորող գործում առկա ապացույցները և քննարկվող իրավահարաբերությունները կարգավորող կանոնները, Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Վազգեն Սամվելյանին պետք է ենթարկել կարգապահական պատասխանատվության, հետևյալ պատճառաբանությամբ.

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ պարբերության համաձայն՝ փաստաբանը փաստաբանների պալատի սահմանած չափով և կարգով մուծում է անդամավճար՝ փաստաբանների պալատի ընդհանուր պահանջների և փաստաբանական գործունեության իրականացման հետ կապված այլ ծախսերի համար: Նույն օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է մուծել անդամավճարներ:

Համաձայն «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 2.9.1. կետի՝ փաստաբանը պարտավոր է սահմանված կարգով և չափով Պալատին վճարել անդամավճար:

Համաձայն ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 26.12.2013թ.-ին թիվ 33/6-Լ որոշմամբ ընդունված «Անդամավճարների, մուտքի և այլ վճարների վճարումների վերաբերյալ» կարգի (այսուհետև Կարգ) 7-րդ կետի՝ փաստաբանները յուրաքանչյուր ամսվա համար անդամավճարների վճարումը կատարում են հաշվետու ամսվան հաջորդող ամսվա մինչև տասնհինգը, իսկ նույն Կարգի 21-րդ կետով սահմանվում է, որ ամենամսյա վճար վճարելու պարտականությունը խախտելու համար փաստաբանը կամ օգնականը ենթակա են կարգապահական պատասխանատվության:

Վերոնշյալ նորմերի վերլուծությունից հետևում է, որ սահմանված ժամկետներում անդամավճար չվճարելու համար փաստաբանն ենթակա է պատասխանատվության:

Փաստաբան Վազգեն Սամվելյանը խախտել է վերը նշված նորմերի պահանջները, որն ապացուցվում է գործում առկա՝ ՀՀ փաստաբանների պալատի գլխավոր հաշվապահի կողմից 16.01.2016թ. տրամադրված տեղեկանքով: Խորհուրդը կարգապահական տույժ նշանակելիս հաշվի է առնում, որ սույն որոշումը կայացնելու դրությամբ փաստաբանը նախկինում նմանատիպ խախտման համար կարգապահական պատասխանատվության չի ենթարկվել:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7. հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 39.9. հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության» 16.26-րդ կետի, «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 30-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի պահանջներով՝ Խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Փաստաբան Վազգեն Սամվելյանին (արտոնագիր թիվ 958) ճանաչել մեղավոր «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասի, 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 2.9.1. ենթակետի պահանջների խախտման համար:

2. Փաստաբան Վազգեն Սամվելյանի (արտոնագիր թիվ 958) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ նկատողություն:

3. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին հրազեկել փաստաբան Վազգեն Սամվելյանին:

Ծանոթություն. *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկ ամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝

Կարեն Մեծլումյան